

ԿԱՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՀԱՅՈՑ

Ա.

ՈՐՀՆՈՒԹԻՒՆՔ, [ԱՆՈՒԱՆՔ ԵՒ ԳՈՐԾՔ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ]

(Ձեռ. № 625, էջ 93բ—94ա, ԺԷ դ.)

93բ ...Ա. Սուրբն Դիոնէսիոս՝ յոյժ գիտնական և հանճարեղ: Սա յաւուր խաչելութեանն Քրիստոսի ետես զխաւարումն արեգական և Պողոսէ լեալ եպիսկոպոս աթենացոց:

Բ. Յրոեթէոս ընկերն Դիոնէսիոսի: Ի սմանէ ուսան ամենայն ուղղափառաց ասել Աստուածածին զսուրբ կոյսն Մարիամ. հրեղէն լեզուս:

Գ. Սեղբեստրոս: Սա մկրտեաց զմեծն Կոստանդիանոս: Սա կարգեաց ի վեր քան զաւաք լրումն լուսնի առնել Զատիկն:

Դ. Աթանաս Աղէքսանդրացին: Սա գրեաց Հաւատամքն, որ ի <կի> Նիկիա, և անտի ընկալան ամենայն ազգ քրիստոնէից, և այլ կանոնս գրեաց:

Ե. Մեծն Կիւրեղ Երուսաղէմացին: Սա արար զգիրս Երախայիցն և կարգեալ գիրսն Յակոբայ, յաւել ընթերցուածս ԺԹ (19)՝ հանդերձ մեկնութեամբ նոցին, որ ասի Կոչումն ընծայութեան, ՀԷ (77) ամ արար պատրիարգութեան:

Զ. Եփրեմ Խորին Ասորին: Սա արար Մեկնութիւն Հին և Նոր Կտակարանացը՝ յԱրարածոցն սկսեալ // մինչ ի Աւետարանն Յոհաննու, և՝ այլ
94ա բազում ճառս ի տօնս տէրունականս՝ թուով ԷՌ (7000):

Է. Բարսեղ Կեսարացին հաւասար գտաւ սուրբ առաքելոց: Սա արար զգիրս Պաւոցն, և Հարցողացն և Վեցօրէից արարչութեանն Աստուծոյ և այլ մեկնութիւնս աստուածային գրոց. յոյժ ծերացեալ էր:

Ը. Գրիգոր Նիւսացին՝ եղբայր Բարսղի Կեսարացոյ ըստ մարմնոյ: Սա արար զգիրս Կազմութեան և Բնութեան մարդոյս, արար Երգ երգոյն մեկ-

նութիւնս, այլ և ինն երանութեանն և աստուածուսոյց Աղօթիցն, սրար զգիրս Կուսութեան:

Թ. Գրիգոր Աստուածաբանն արար բազում արթիւնս: Սա արժանացաւ ինն պարգևացն Աստուծոյ Հոգոյն, զոր առաքեալն Պողոս թուէ:

Ժ. Եպիփան Կիպրացին: Սա արար զՄեկնութիւնս Սաղմոսացն Դաւթի և այլ բազում ճառս:

ԺԱ. Յոհան Ոսկիբերանն: Սա ասաց ճառս ԲԺ-ն Ռ (12 000) և կոչեցաւ Ոսկիբերան վասն պատուականութեան բանին, վարդապետ ապաշխարութեան:

ԺԲ. Փոքր Կիւրեղ Աղէքսանդրացին: Սա արար զգիրս Գանձուցն և Պատգամացն:

Այլ և որպէս երկոտասան առաքելոց գլուխն Դ (4) աւետարանիչքն եղան, այսպէս երկոտասան վարդապետաց գլուխն՝ Աթանաս, Կիւրեղ Երուսաղէմացին, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Աստուածաբանն:

Բ

ԱՅՍ ԵՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՔՆ

(Ձեռ. № 605, էջ 19բ—20ա, ԺԷ դ.՝ 1671 թ. առաջ: Առաջինի մի այլ տարբերակն է: Այս բնագրերին կրկնում են նույն Մատենադարանի թիվ 81 (258ա), 403 (252ա) և այլ ձեռագրերում պահպանված ցանկերը, որոնք սոսկ անունների թվարկում են):

Ա. Առաջին Դիոնիս[ի]ոս Արիսպագացին: Ի սման[է] աւանդեաց ձեռնադրութիւն քահանայութեան երկնայնոցն, զոր ուսաւ ինքն ի Պողոսէ առաքելոյն:

Բ. Երկրորդ Յոէթէոս վարդապետն՝ ընկեր սրբոյն Դիոնիս[ի]ոսի: Սայ զարմացոյց զհրեղէն լեզուն՝ ի Ներբողեան Կուսին գովեստից:

Գ. Երրորդ սուրբն Սեղբեստրոս, որ մկրտեաց զմեծն Կոստանդիանոս: Սա սահմ[ան]եալ կանոն[ե]աց ի վեր քան զաւագ լրումն առնել զաւագ Զատիկն:

Դ. Չորրորդ մեծն Աթանաս Աղէկսանդրացին: Սայ գրեաց զՀաւատամքն ի ժողովն Նիկիայ:

Ե. Հինգերորդ մեծն Կիւրեղ Երուսաղէմացին: Ի սորայ ժամանակն երևեցաւ սուրբ խաչն ի Գողգոթայ՝ ցոլացեալ մինչ ի լեառն Ձիթենեաց, և արար զգիրս Երեսխայից:

Զ. Վեցերորդ սուրբ Եփրեմ Խորին Ասորին, որ արար զՄեկնութիւն արար[ած]ոցն Հին և Նոր Կտակարանացն՝ յԱրարածոցն սկսեալ մինչ ի յԱւետարանն Յոհաննու:

Է. Եօթներորդ Բարսեղ Կեսարացին: Սայ արար զգիրս Պահոցացն և զՀարցողացն: Սմայ ասաց Աստուածածին. «Գրեայ, գրեայ. խնայեայ, խնայեայ», զի ծեր էր:

Ը. Ութներորդ Գրիգոր Նիւսացին՝ եղբայր Բարսեղի: Սայ արար զգիրս Կազմութեան և զԲնութեան:

Թ. Իններորդ Գրիգոր Աստուածաբանն:

Ժ. Տասներորդ մեծն Եփիփան Կիպրացին, որ արար զՄեկնութիւն Սաղմոսացն Դաւթի:

ԺԱ. Մետասաներորդ Յոհան Ոսկիբերանն, որ ասաց ճառս երկոտասան հազար և կոչեցաւ Ոսկիբերան:

ԺԲ. Երկոտասաներորդ Կիւրեղ Աղէքսանդրացին, որ արար զգիրս
20ա Գանձուցն // և զՊարապմանցն:

Աթանաս և Կիւրեղ, Բարսեղ և Գրիգոր Աստուածաբանն՝ սոքայ գերագոյնք են:

Գ
ԹԻՒՔ ԵՒ ԱՄՔ ԺԱՄԱՆԱԿԱՑ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ՍԿՍԵԱԼ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ ԽԱ (41)

(Ձեռ. № 2220, էջ 295բ—296բ, 1789—1790 թթ.)

Սուրբն Մատթէոս գրեաց զԱւետարանն յամի Տեառն ԽԱ (41):
Սուրբն Մարկոս յամի Տեառն Խե (45):
Սուրբն Ղուկաս յամի Տեառն ԾԸ (58)
Սուրբն Յովհաննէս յամի Տեառն ՂԹ (99):
Դիոնէսիոս Արիսպագացին, Իգնատիոս Աստուածազգեացն, Շմաւօն ազգականն Քրիստոսի կատարեցան՝ ՃԹ (109):
Պօղիկարպոս Իզմիւռնոյ հայրապետն՝ ՃԿԹ (169):
Երանոս հետևողն առաքելոց՝ ԲՃԵ (205):
Գրիգոր Սքանչելագործն՝ ԲՃԿԵ (265):
Ամբ ծննդեանն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ ԲՃՃԹ (289):
Մուտն ի Վիրապն՝ ԲՃՁԹ (289):
Ձեռնադրիլն ի Կեսարիա՝ ԳՃԳ (303):
Կատարումն սրբոյն Պետրոսի Աղէքսանդրու հայրապետին՝ ԳՃԺ (310):
Հաւատալն մեծին Կոստանդիանոսի՝ ԳՃԺԴ (314):
Գումարումն Նիկիոյ սուրբ ժողովոյն ըստ պատմագրաց՝ ԳՃԻԵ (325):
Հանգիստ սրբոյն Նիկողայոսի հայրապետին՝ ԳՃԻԶ (326):
Ի բաց կալն յաթոռոյն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ ԳՃԼԲ (332):
Հանգիստ սրբոյն Սեղբեստրոսի հայրապետին՝ ԳՃԼԵ (335):
Յակոբայ Մծբնայ հայրապետին՝ ԳՃԽԸ (348):
Անտոնի Անապատականի՝ ԳՃՄԶ (356):
Աթանասի հայրապետին՝ ԳՃՀԳ (373):
Բարսղի և Եփրեմի՝ ԳՃՀԸ (378):
Գումարումն Կոստանդնուպօլսի սուրբ ժողովոյն՝ երեք հարիւր ՁԱ (381):
20բա //Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին և Ներսիսի մեծին՝ ԳՃՁԶ (386):
Գրիգորի Աստուածաբանին՝ ԳՃՁԹ (389):
Գրիգորի Նիւսացւոյն՝ ԳՃՂԵ (395):
Ամբրոսիոսի Միլանուլացւոյն՝ ԳՃՂԷ (397):
Եպիփանու Կիպրացւոյն՝ ԴՃԳ (403):
Յովհաննու Ոսկեբերանին՝ ԴՃԷ (407):
Գիւտ գրոյն հայոց՝ ԴՃԸ (408):
Ջերոնիմոսի Լատինացւոյն՝ ԴՃԻ (420):
Օգոստինոսի Հիպոդիտացւոյն՝ ԴՃԼ՝ (430):
Գումարումն սուրբ ժողովոյն Եփեսոսի՝ ԴՃԼԱ (431):
Կիւրղի Աղէքսանդրացւոյն՝ ԴՃԽԴ (444):
Սահակայ Պարթևի և Մեսրոպայ հայրապետին՝ ԴՃԽԹ (449):

Միւս ժողովն Եփեսոսի՝ ԴՃԽԹ (449):
Ժողովն Քաղկեդոնի՝ ԴՃԾԱ (451):
Կատարումն սրբոց Վարդանանցն՝ ԴՃԿԳ (463):
Յովհաննու Մանդակունեցւոյն՝ ԴՃՂԶ (496):
Գումարումն երկրորդ ժողովոյն Կոստանդնուպօլսի, ուր ընդդիմացան սխալմանցն Քաղկեդոնի՝ հինգ հարիւր ԾԳ (553):
Գրիգորի պապուն Հռոմայ՝ ԶՃԴ (604):
Գումարումն երրորդ ժողովոյն Կոստանդնուպօլսի՝ վեց հարիւր ԶԱ (681):
Յովհաննու Օձնեցւոյն՝ ԷՃԻԶ (726):
Գումարումն երկրորդ ժողովոյն Նիկիոյ՝ վասն սրբոց պատկերաց՝ ԷՃԶԷ (787):
Գումարումն չորրորդ ժողովոյն Կոստանդնուպօլսի, ուր սկիզբն եղև երկպառակութեան Յունաց ընդ Լատինացւոց՝ ԸՃՀԹ (879):
Գրիգորի Նարեկացւոյն՝ ՌԴ (1004):
96բ //Գրիգորի Վկայասիրին՝ ՌՃԷ (1107):
Բեռնարտոսի հօրն՝ ՌՃԾԳ (1153):
Ներսէսի Շնորհալւոյն՝ ՌՃՀԳ (1173):
Ներսէսի Լամբրոնացւոյն՝ ՌՃՂԷ (1197):
Մխիթարայ Գոշին՝ ՌԲՃԺԶ (1216):
Վարդանայ վարդապետին՝ ՌԲՃՀԱ (1271):
Ալբերթի՝ ՌԲՃԶ (1280):
Յովհաննու Որոտնեցւոյն՝ ՌԳՃԶԷ (1387):
Գրիգորի Տաթևացւոյն՝ ՌԴՃԸ (1408):

Դ

[ԿԱՐԳ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԳԱՒԱՌԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ]
(Ձեռ. № 1078, էջ 40բ—41բ, 1760 թ.)

Աստանաւր պարտ է գիտել մեզ, թէ յորմէ սերեցաւ զծայրագոյն գա-
41ա ւազան վարդապետութեանս Հայոց. մինչև //առ մեզ են այսոքիկ:
Նախ Թադէոս առաքեալն Քրիստոսի:
Նորին աշակերտ Թէոփիլոս:
Նորին աշակերտ Ղևոնդ:
Նորին աշակերտ սուրբ Լուսաւորիչն մեր Գրիգորիոս:
Նորին աշակերտ Արիստակէս:
Նորին աշակերտ Վրդանէս:
Նորին աշակերտ Յուսիկ:
Նորին աշակերտ Փառներսեհ:
Իսկ մեծն Ներսէս էառ յԵւսեբեայ:
Նորին աշակերտ Իսահակ:
Նորին աշակերտ Մեսրոպ. սա արար զգիրս Հայոց:
Նորին աշակերտ Մովսէս Քերթողն:
Նորին աշակերտ Դաւիթ Անյաղթն:
Նորին աշակերտ Եզնակ:
Նորին աշակերտ Մամբրէ:
Նորին աշակերտ Ղազար:

Նորին աշակերտ Պօղոս:
Նորին աշակերտ Աբրահամ:
Նորին աշակերտ Յովհաննէս Մայրավանեցին:
Նորին աշակերտ Ներսէս Մեծոփեցին:
Նորին աշակերտ Յոհան Օձնեցին:
Նորին աշակերտ Վահրամ:
Նորին աշակերտ Ներսէս Կղայեցին:
Նորին աշակերտ Գրիգոր:
Նորին աշակերտ Մխիթար, որ մականուամբ Գոշ ասի:
Նորին աշակերտ Յովհաննիսի, որ է Վանական:
Նորին աշակերտ Վարդան:
41բ //Նորին աշակերտ Ներսէս:
Նորին աշակերտ Եսայեայ, որ է ի Նիշ գաւառէ:
Նորին աշակերտ Յոհաննու Որոտնեցոյ:
Նորին աշակերտ Գրիգոր Տաթևացոյն:
Նորին աշակերտ Դանիէլ:
Նորին աշակերտ Յոհաննէս Համշինեցոյ:
Նորին աշակերտ Թորոս:
Նորին աշակերտ Գրիգոր Տարօնեցոյ:
Նորին աշակերտ Յովհաննէս, որ մականուն Շիրակ ասի:
Նորին աշակերտ Ղուկաս Կեղեցոյ:
Նորին աշակերտ Սրապիոն յՈւրմեցի, որ եղև կաթողիկոս սուրբ Էջմիածնայ:
Նորին աշակերտ Գրիգոր Կեսարացի:
Նորին աշակերտ Մովսէս Սիւնեցի, որ եղև կաթողիկոս սուրբ Էջմիածնայ:
Նորին աշակերտ Պետրոս Կառկառեցի, որ եղև կաթողիկոս ի Սիս:
Նորին աշակերտ Թորոս, որ եղև կաթողիկոս ի Սիս:
Նորին աշակերտ մեծն Մարտիրոս Շնքուշեցի:
Նորին աշակերտ Արիստակէս Խարբերտեցի:
Նորին աշակերտ Եղիազարու Հօռոմկլայեցի, որ եղև կաթողիկոս սուրբ Էջմիածնայ:
Նորին աշակերտ Նահապետ, որ եղև կաթողիկոս սուրբ Էջմիածնայ:
Նորին աշակերտ ՆԵՐՍԷՍ, որ եղև ԿԱԹՈՂԻԿՈՍ Աղուանից. Մեծ գունէից:

Ե

[ԿԱՐԱՊԵՏԻ ԲԱՂԻՇԵՑԻՈՅ] ԱՅՍ ԵՆ ԿԱՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՄԵՐՈՑ՝ ՈՉ ԱՌԱՋՆՈՑՆ, ԱՅԼ՝ ՎԵՐՋՆՈՑՆ:

(Ձեռ. № 45, էջ 325բ, 1642 թ.: Նույն քնագրի մի այլ՝ գրչական չնչին տարբերություններ ունեցող տարբերակ գրանցված է Մատենադարանի թիվ 2865 ձեռագրի 312բ էջում, որպես հետագա հիշատակագրություն)

Նախ Գրիգոր Տաթևացին.
Եւ Նորին աշակերտն Դանիէլ.
Նորին՝ Յովհաննէս Համշեցին.
Նորին՝ Գրիգոր յԱրճիշոյ, որ մականուն Զորթան ասի.
Եւ միւս աշակերտն՝ Թորոս վարդապետն.

Իսկ Զորթանի աշակերտն Ներսէս, որ Մատաղ ասի:
Նորին՝ Ներսէս Բաղիշեցի.
Նորին՝ Ներսէս Ամկեցի,
Նորին աշակերտքն Բ (2).
Յոհանէս Ոստանցին ի գեղջէն Վառնուշատ և
Ազարիայ ի Հայոց Մեծաց, ի գեղջէն Շահկերտոյ՝ մերձ ի քաղաքն Նախճուանայ:
Իսկ աշակերտքն Յովաննէս Ոստանցոյն՝
Սիմոն Ապարանցին և
Բարսեղ Գաւառցին.
Սիմոնի աշակերտքն Կարապետ Կալօն և Փարխնդցին,
և նորին՝ միւս փոքր Սիմէոն Ճգնազգեացն:
Եւ Բարսեղի աշակերտքն՝ Յոհանէս Բուժիկ Բաղիշեցին և այլք բազումք:
Եւ Յոհանէսին՝ Խաչատուր մեծ ռաբունին, և այլ արևելեանք ամէն և Զորթանէն սերեցան:
Դարձեալ նոր սկսայց ի Յովանէս Համշեցին.
Նորին միւս աշակերտն Թորոս, որ ի վերոյ ասացաւ.
Թորոսի աշակերտն Գրիգոր Տարօնեցին.
Նորին՝ Յովանէս Շիրաքն.
Նորին՝ Ղուկասն, որ էր ի Խորձունեաց գաւառէն Կեղոյ.
Նորին՝ Պետրոս Կարկառցին և
Սրապիոն յՈւրհայեցին, որ եղև կաթողիկոս սուրբ աթոռոյն Էջմիածնայ տարի մի և վեց ամիս և փոխեցաւ առ Քրիստոս:
Այլ և նորին աշակերտքն՝
Բարսեղ որ է Սասնոյ, ի Նիջ գաւառէն, ի գեղջէն որ ասի Մարման և
Յովսէփ Հզվեցին,
Յոհաննէս յՈւրհայեցին:
Եւ՝ նուաստ Կարապետ բանի սպասավոր Բաղիշեցի, ի գեղջէն Փարխընդոյ, զոր լուա ի պատմագրացն և զոր աչօք մեր տեսաք, զի չէին ինչ պակաս յառաջին վարդապետացն ուսմամբ և գործով, այլ ևս գերագոյն: Այլ և երկու անուանի վարդապետ այլ գրեցի.
Յովաննէս Անթապեցին, որ է կաթողիկոս Կիլիկեցոց, և
Գրիգոր Ղասարցին՝ յԱռաջին Հայոց՝ բանիբուն և սիրող իմաստասիրական հանճարոյ:
Յովաննէս ի մերոյ Ներսիսեանցն է, և Գրիգոր՝ ի Թորոսի աշակերտացն:

Զ

ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ՄԵՌԱՆԵԼՆ
(Ձեռ. № 84, էջ 282բ, 1614 թ.)

Հանգեաւ ի Քրիստոս Ներսէս վարդապետն ի վանս Գլաձորոյ՝ թվին հայոց ՉԼԳ (1284), ի փետրվարի ԻԶ (26), ի փառս.
Վախճանեցաւ սուրբ վարդապետն Մխիթար Այրիվանեցին՝ թվականիս մերոյ ՉՂԶ (1337) (իմա՝ ՉԾԶ—1307—Գ. Հ.), փետրվարի Ժ (10):

Յոհաննէս Որոտնեցին փոխեցաւ ի Քրիստոս թվին ՊՀԵ (1426)՝ ի նոյն աւուր ծնեալ յորում վախճանեալ. և այս է Կախիկ վարդապետն, և էր սայ գաւառաւ Որոտնեցի, յաշխարհէն Սիւնեաց, ի գեղջէն Վաղատնոյ:

Վախճանեցաւ Զաքարիա կաթողիկոս Աղթամարցին՝ թվին ՊԽԲ (1393), յունիսի ԻԶ (26):

Է

ՎԿԱՅԵԱԿԱՆ ԳԱԻԱԶԱՆԻ
(Ձեռ. № 748, էջ 312ա—314բ, 1731 թ.)

Ինքնագոյ իսկութեան և երրեակ անձնաւորութեան և անքակ միաւորութեան անօգնական սահման, պատեզր անփոփոխ, կերպաձև տիպ անորակ, յէութիւն անսկիզբն, գոյութեան անեղ, կեանք անվախճան, իսկութիւն յաւէտ դիմօք յատկացեալ, և բնութեամբ միացեալ կամք, մի ներգործութիւն, նոյն տէրութիւն զոյգք, զորութիւն անկրշիռ, իշխանութիւն հարթ, պատիւ հաւասար, կատարելութիւն անպակաս, լիութիւն աննուազ, պարզութիւն անխառն, մաքրութիւն զուտ, բաղցրութիւն առանց դառնութեան, բարութիւն առանց չարութեան, ճառագայթ անշիջանելի, ճշմարտութիւն անսուտ, ցընծութիւն անզրաւ, խորհուրդ խոր, իմաստութիւն անբաւ, բարձրութիւն անբաղտատ, որքանութիւն անկէտ, մեծութիւն անչափ, գերազանցութիւն անպարփակ տեղոյ, հոսպ անհեռի, բարձրեալ անքննին, զօրութիւն անեղ, տէր արարածոց, թագաւոր երկնի, պետ բարի, աջ ապաւինութիւն,
312բ պարիսպ ամրութեան, անզննին յիմանալեաց, // անքննին ըսգալեաց, անհաս Բանի, անճառ լեզուի, արարիչ ամենայն գոյի, ընտեղծիչ հրեշտակաց, հաստիչ հ[ո]ղեղինաց, յորոց անլեռելի օրհներգութեան պատուելի և երկրրպագելի, և փառաւորելի, ամենասուրբ Երրորդութիւն նոյն մարդասէր և արարչագործ բնութիւն բարերարին Աստուծոյ, ըստ բարերար գործոց իւրոց:

[Ա]. Նախ յառաջ շարժեաց ընտեղծումն յէից, և նախախնամեաց, ևս, և նախ ինքն եցոյց արարիչն զնախախնամութիւն իւր, զի որպէս զգալի յերկնէս կրկին լուսատիայութիւնք ճառագայթին և լուսաւորեն զմեզ, նոյնպէս Աստուած պէտականէն լուսոյ, այսինքն՝ ի Հօրէն կրկին լոյս, Բանն Աստուած և Հոգին Սուրբ վարդապետաբար լուսաւորէ զհաւատացեալս նախախնամութեամբ իւրով:

Բ. Երկրորդ՝ ի նոյն Բանէն Աստուծոյ գիտութիւն իմաստութեան հեղու առ քէրոբէսն և շնորհօք իմաստութեան նոցա բարերարութիւն:

[Գ]. Երրորդ՝ նոյն ինքն յառաջին և միջին և վերջին երիցս երրեակ տարբորոշեալ դասքն, ըստ մեծին Դ[ի]ոնեսիեայ ուսուցանեն զմիմեանս,
313ա այսպէս և վարդապետք եկեղեցւոյ ուսուցանեն // զլաշակերտեալսն իւրեանց, և նոքա՝ զժողովուրդսն նախախնամաբար:

Դ. Չորրորդ՝ զի ստեղծան ետուր ի նախահայրն մեր Ադամ, որ մարգարէացաւ, թէ անա այժմ այս ոսկր ոսկերաց իմոց և մարմին ի մարմնոյ իմոյ, որ նշանակէր զմարգարէութեան և զվարդապետութեան շնորհօք Սուրբ Հոգւոյն:

Ե. Հինգերորդ՝ երևեցաւ շնորհս Աստուծոյ ի նահապետն Նոյ, որ վարդապետաբար խրատէր զորդիսն իւր՝ պաշտել և ոչ խառնակիլ ի տունն Կայենի:

Զ. Վեցերորդ՝ երևեցաւ շնորհս այս ի վաղ աւերումն աշտարակին, որ գնացին իրաքանչիւր ազգս իրեանց և ուսուցին վարդապետաբար զկրօնս և զլեզուս իրեանց միմեանց:

Է. Եօթներորդ՝ երևեցաւ սոյն շնորհս առ նահապետն Աբրահամ, որ բանական օրէնս ընկալաւ Աստուծոյ և խրատէլով ուսուցանէր զորդիսն:

Ը. Ութերորդ՝ պայծառացաւ շնորհս այս առ մեծ մարգարէն Մովսէս, զոր էառ զգաւազանն Աստուծոյ և վարդապետ կոչեցաւ ի վերայ ժողովրդեան իւրոյ՝ ազգին Իսրայէլի, և ետ աշակերտին իւրոյ Եսուայ որդւոյ Նաւեայ:

Թ. Իններորդ՝ երևեցաւ շնորհս այս ի Հեղի քահանայն, որ խրատէր զորդիսն իւր: Այսպէս եհաս ի Նաթան յանդիմանօղն Դաւթի, ի Եզրաս մեծ դպիրն, և Եսու Օսեդեկեանց քահանայն մեծ, և ի նմանէ մինչև ի ծերն Սի-
313բ մէօն և // մինչև ի մեծն Մկրտիչն Յոհաննէս՝ Կարապետն Քրիստոսի, որ քարոզէր յանապատի և ասէր. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից» և այլն:

Ժ. Տասներորդ՝ ճշմարտապէս երևեցաւ ի ճշմարիտ վարդապետն ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որպէս և հրամայեաց ասելով, թէ «Դուք կոչէք զիս վարդապետ, բարիոք առնէք և եմ իսկ» և եցոյց զվարդապետութիւն իւր ի քարոզելն իւրում ժողովրդեանն: Եւ արար զառաքեալսն իւր վարդապետս, յորժամ առաքեաց զնոսա քարոզել:

ԺԱ. Մետասաներորդ՝ ընթացան յառաքեալքն ի վիճակս իւրեանց և եղեն վարդապետք, աշակերտացն իւրեանց քարոզէին զօրհնեալ անուն ամենասուրբ Երրորդութեան, փառաւորելով զՀայր և զՈրդի և զամենասուրբ Հոգին:

ԺԲ. Երկոյտասաներորդ՝ պարգևեցաւ շնորհս այս ի սուրբ հայրապետսն առաջինս, որ եղեն վարդապետքն եկեղեցւոյ և ուսուցին մեզ պաշտել զԱստուած աստուածայնօք և ատել զաշխարհս աշխարհայնօք՝ որպէս սուրբն Բարսեղ և Գրիգոր Աստուածաբանն, մեծն Աթանաս, և սուրբն Կիւրեղ, և Յոհան Ոսկիբերան և այլ հետևողք սոցա երկոտասան վարդապետք:

ԺԳ. Երեքտասաներորդ՝ շնորհս այս և աստիճան վարդապետութեան բացեափայլեաց ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ, քանզի յառաքեալն Թադէոս առեալ ի Տեառնէ շնորհս այս, որով լուսաւորեաց զՀայս, և յետ գաւազան Թէոփիլէի, որ ի Կեսարիէ Կապադովկացոց, և նա՝ զՂեւոնդիէ
314ա պատրիարգին Կէսարիոյ // և նա ետ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և նա ետ որդոց իւրոց, այսինքն՝ Արիստակէսի, և նա ետ եղբօր իւրոյ Վըրդանայ, և նա ետ Ուսկայ, նորին աշակերտ Բագրատուն, նորին աշակերտ մեծն Ներսէս, և նա ետ որդոյ իւրում Իսահակայ:

ԺԴ. Չորեքտասաներորդ՝ եկն եհաս շնորհս այս և աստիճան մինչև ի մեծն Մեսրոպ վարդապետն Հայոց, որ եկեղեցական ճոխութեամբ և պերճութեամբ, իշխանութեամբ և պատուօք փառաւորեցաւ Հայոց և ի Յունաց. նորին աշակերտ Մովսէս Քերթողն. նորին աշակերտ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն. նորին աշակերտ Եզնակ. նորին աշակերտ Մամբրէ. նորին աշակերտ Ղազար. նորին աշակերտ Պողոս. նորին աշակերտ Աբրահամ. նորին աշակերտ Յոհան Գոմեցին. նորին աշակերտ Ներսէս Մեծոբեցին. նորին աշակերտ Յոհան Օձնեցին. նորին աշակերտ Վահրամ. նորին աշակերտ Ներսէս Կլայեցին. նորին աշակերտ Գրիգոր Տղայ կոչեցեալն. նորին աշակերտ մեծ և երջանիկ ռաբունապետն Մխիթար, որ մականուամբ Կոշ կոչեցաւ. սա յայտնապէս ետ գաւազան Յոհաննէս Վանականին. նորին

աշակերտ մեծն Վարդան. նորին աշակերտք Ներսէս. նորին աշակերտ Եսայի Նիչեցին. նորին աշակերտ Յոհան Որոտնեցին, որ մականուամբ Կախիկ ասի. նորին աշակերտ Գրիգոր Տաթևացին. նորին աշակերտ Յոհաննէս
314բ Արճիշեցին. նորին աշակերտ // <նորին աշակերտ> Դանիէլ ճգնաւորն. նորին աշակերտ Յոհաննէս Համշեցին՝ հրեղէն լեզուն. նորին աշակերտ Գրիգոր Մեռելայարոյց, որ մականուամբ Զորթան ասի. նորին աշակերտ Թորոս. նորին աշակերտ Գրիգոր Տարօնացին. նորին աշակերտ Յոհաննէս, որ մականուամբ Շիրակ ասի. նորին աշակերտ Ղուկաս Կեղեցին. նորին աշակերտ Սրապիոն Ուրհայեցի, որ եղև կաթողիկոս [ի] սուրբ Էջմիածին. նորին աշակերտ Գրիգոր Կեսարացին. նորին աշակերտ Մովսէս Սիւնեցին, որ եղև կաթողիկոս սուրբ Էջմիածնի. նորին աշակերտ Պետրոս Կառկառեցին, որ եղև կաթողիկոս [ի] Սիս. նորին աշակերտ Թորոս, որ սա ևս եղև կաթողիկոս [ի] Սիս. նորին աշակերտ մեծն Մարտիրոս Շնքուշեցին. նորին աշակերտ Արիստակէս Խարբերդցին. նորին՝ Սահակ Երուսաղմեցին, որ մականուամբ Կլիմբոզ կոչի. նորին աշակերտ Սահակ Ապուշեխցին, որ եղև պատրիարգ սրբոյն Սաղիմայ և դիտապետ Կոստանդնուպոլսոյ. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

Ը

[ԳՐԻԳՈՐԻ ԲԱՂԻՇԵՑՒՈՅ ՎԿԱՅԵԱԿԱՆ ԳԱՒԱՌԱՆԻ՝ ՏՈՒԵԱԼ Ի ՎԱՐԴԱՆԱՅ ԲԱՂԻՇԵՑՒՈՅ]

(Ձեռ. № 737, էջ 6ա—8ա, ԺԸ դ.)

Ի գերազանց լուսոյ և ի բարերուն յաստուածապատկան Հօրէ յառաջ իսկ յիսկզբան շարժեալ գիտութեամբ յիստեղծումն ամենայն էից գերազարդեալ շքեղապանծ փառօք զերկինս և զերկիր վայելչացոյց իրով ամենասքանչ և արարչագործ բնութեամբ և յետոյ՝ իբր զտէր և զիշխան, զմարդն ստեղծագործեաց վայելօղ երկուց աշխարհաց:

Եւ նախ ինքն՝ ամենազօր արարիչն. նախախնամութիւն եցոյց առ իրական արարածս, քանզի որպէս ի ըզգալի երկնէս կրկին լուսափայլութիւնք ճառագայթին և զվարնացեալ լուսաւորեն զմեզ, նմանապէս և յանծայրածագ թափանցանց լուսոյ Հօրէ կրկին ճառագայթ հատանին և ոչ բաժանին ի նմանէ, այսինքն՝ Աստուած Բանն ծնեալն ի Հօրէ և Աստուած Սուրբ Հոգին բղխեալն ի նոյն անճառ Հօրէ. սոքայ երրեակ և մին՝ միշտ նախախնամաբար վարդապետեն զմեզ՝ զհաւատացեալս իւր: Եւ է այս անճառ նախախնամութիւն:

Երկրորդ՝ ի նոյն ամենասուրբ Երրորդութենէն գիտութիւնն և անճառածագ իմաստութիւնն հեղու միշտ առ քերովբէսն և շնորհք իմաստութեան բղխէ առ սերովբէսն, և սոքօք զբոլոր դասս կատարելագործեն բանիւ վարդապետութեամբն իւրեանց: Եւ այս ևս նախախնամութիւն քարոզի:

Երրորդ՝ զի նոյն ինքեանք առաջին և միջին և վերջին, երիս երրեակս դասակարգութիւնքն տարորոշեալս մեծին Դիոնիսեայ, և նախ զմիմեանս
6բ ուսուցանեն և առ միմեանս զեղուն շնորհս գիտութեան // վարդապետօրէն. նոյնպէս և վարդապետք ուսուցանեն զաշակերտս, և նոքա՝ զժողովուրդս խնամաբար:

Չորրորդ՝ զատիճանս եդ ի նախահայրն Ադամ. մարգարէացաւ թէ

աճա ոսկր յոսկերաց իմոց, որ նշանակէր զմարգարէութեան և զվարդապետական շնորհն:

Հինգերորդ՝ երևեցաւ շնորհս այս ի նահապետն Նոյ, որ վարդապետէր խրատելով զորդիսն իւր՝ պաշտել զԱստուած կենդանի և ոչ խառնակիլ ի տոհմն Կայենի:

Վեցերորդ՝ երևեցաւ կարգս այս յաւերումն աշտարակին, որք գնացին իւրաքանչիւր յազգս իւր և ուսուցին վարդապետաբար զկրօնս և զլեզուս իւրեանց:

Եօթներորդ՝ երևեցաւ առ նահապետն Աբրահամ, որ բնական օրէնս ընկալաւ յԱստուծոյ և խրատեալ ուսուցանէր զորդիսն իւր:

Ութներորդ՝ պայծառացաւ շնորհս այս առ մեծն Մովսէս. զգաւազանն, զոր էառ յԱստուծոյ, վարդապետեաց ժողովրդեանն իւր:

Իններորդ՝ երևեցաւ առ Հեղի շնորհս աստիճանիս այս, որ խրատէր զորդիսն իւր: Այսպէս և առ Նաթան յանդիմանօղն Դաւթի և յԵզրաս և Յեսու Յովսեդէկեանց քահանայն մեծ և ի նմանէ մինչև ի Յովհաննէս Մկրտիչն, որ վարդապետէր և ասէր. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ»:

Տասներորդ՝ երևեցաւ ի ճշմարիտ վարդապետն, ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որպէս հրամայեաց ասելով. «Դուք կոչէք զիս Տէր և վարդապետ, որպէս և եմ իսկ», և եցոյց զվարդապետութիւնն ի քարոզել ժողովրդեանն:

7ա Մետասաներորդ՝ արար զա//ռաքեալսն վարդապետ, յորժամ առաքեաց զնոսա քարոզել, և պատուիրեաց նոցա, ասելով. «Գնացէք աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք» և այլն:

Երկոտասաներորդ՝ ի համբառնալն, Տէրն մեր Յիսուս Քրիստոս եդ զձեռս իւր ի վերա գլխոց նոցա և արար զնոսա կաթողիկոսունս, և յորժամ էջ Սուրբ Հոգին, ի սուրբ Վերնատանն, յաւուր Պէնտէկոստէի արար զնոսա վարդապետս և ուսուցիչս:

Երեքտասաներորդ՝ ընթացան առաքեալքն ի վիճակս իւրեանց և եղեն վարդապետք հեթանոսաց. քարոզէին զահեղ անուն ամենասուրբ Երրորդութեան՝ զՀայր և զՈրդի և զամենասուրբ Հոգին:

Չորեքտասաներորդ՝ հայրապետք սուրբք եղեն վարդապետք եկեղեցւոյ, ուսուցին պաշտել զԱստուած աստուածայնօք, ատել զաշխարհս աշխարհայնօք՝ որպէս սուրբն Բարսեղ, Գրիգոր Աստուածաբանն, մեծն Աթանաս, սուրբն Կիւրեղ, Յոհան Ոսկիբերան և այլք հետևողք նոցին:

Հնգետասաներորդ՝ եկն եհաս շնորհս այս և աստիճանս ի մեծն Մեսրոպ վարդապետն հայոց, որ էկէսիաստիկան իշխանութեամբ և պատուօք փառաւորեցաւ ի Յունաց և ի Հայոց, և անտի եկն եհաս յեռամեծ և յերջանիկ րաբունապետն մեր Մխիթար, որ մականուամբ Գոշ կոչեցաւ, և նա շնորհեաց յայտնապէս գաւազան Յովանէս Վանական վարդապետին: Եւ
7բ նա ետ Վարդանայ մեծ // վարդապետին, և նա՝ Ներսէս վարդապետին, և նայ՝ Եսայեայ վարդապետին Նչեցուն, և նայ՝ Յովհաննու վարդապետի Որոտնեցուն, և նա՝ Գրիգորի վարդապետի Տաթևացուն, և նայ՝ Դանիէլի վարդապետի ճգնաւորին, և նա՝ Յովհաննու վարդապետի Համշենցուն, և նա՝ Գրիգորի վարդապետի Արճիշեցուն՝ մականուամբ Չորթան կոչեցելոյ, և Մեռելայարոյց ասեն զնա, և նա՝ Ներսէս Մատաղ վարդապետին, և նա՝ Ներսէս վարդապետին Բաղիշեցուն, և նա՝ Ներսէս վարդապետի Ամկեցուն, և նա՝ Յովանէս բարեգութ վարդապետի Ոստանցուն, և նա՝ Բարսղի մեծի

վարդապետի Կարպելացուն, և նա Յոհանէս Բուժիկ վարդապետի Բաղիշեցուն, և նա՝ Խաչատուր վարդապետի Բաղիշեցուն, և նայ՝ Վարդանայ մեծ և ընդիր վարդապետի Բաղիշեցուն:

Եւ արդ, ես՝ Բաղիշեցի Վարդան վարդապետս, յերկիրն Բաղէշու և ի մենաստանն Սրբոյն Յովաննու, որ մականուամբ Ամրտոլու Սուրբ Յովանէս կոչի, առաջի բազմաւոյլ վարդապետաց, քահանայից, և առաջի մեծամեծ իշխանաց և ժողովրդոց՝ ետու մեծ գաւազան և կարգեցի գլուխ վարդապետ, դաս ասել, իշխանութիւն և մեծ գաւազան տալ խնդրողաց հոգևոր՝ և սիրասնունդ որդոյն իմոյ Գրիգոր վարդապետին Բաղիշեցու, ի թուականութեանս հայկական ՃարմԻ-երորդի, Ճ-երորդի, Ի-երորդի, Թ-երորդի (1680):

8ա Արդ, մի որ իշխեսցի հակառակ կալ սիրազուն // որդեկիս իմոյ Գրիգորի վարդապետին, զի այլ որ չունի իշխանութիւն ի վերա դորա, բաց յինէն. կապեալն ի դմանէ կապեալ է՝ ըստ բանի Տեառն, և արձակեալն՝ արձակեալ:

Կատարողք հրամանաց մերոց, արբենիք յԱստուծոյ. ամէն:

Այս բանիս վկայ.

Մարգարէ վարդապետ Արզրումցի,
Բարաղամ վարդապետ Հզվեցի,
Ներսէս վարդապետ Արծկեցի,
Կարապետ վարդապետ Սպաւոկերցի,
Սարգիս վարդապետ Բաղիշեցի,
Յովանէս վարդապետ Թօխատեցի,
Միխթար վարդապետ Խութեցի,
Սարգիս վարդապետ Արզրումցի,
Անդրէաս պարոնտէր Արծկեցի.
Բաւ է:

Թ

[ՎԱՍՆ ՉՈՐԻՑ ԵՂԱՆԱԿԱՑՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ]

(Ձեռ. № 5947, էջ 312ա, ԺԸ դ. վերջից ոչ վաղ)

Գիտել պարտ է, զի Դ (4) է վարդապետութեան յեղանակն. նախ Սահմանականն, Բ՝ Բաժանականն, Գ՝ Ապացուցականն, Դ՝ Վերլուծականն:

Արդ, սահմանի փաղանուանքն և բաժանի հոմանունք և ապացուցիս հաստատի և մեկնի:

Դարձեալ՝ բնութիւն իրին սահմանաւ ճանաչի և յատկութիւն՝ բաժանմամբ, վասն որոյ սահմանէ զերանութիւնն:

Ժ

ԳՈՎԱՍԱՆՔ ԳԱՒԱԶԱՆԻ

(Ձեռ. № 5721, էջ 76ա, 1733 թ.: Մատենադարանի ձեռագրացուցակն այս չափածո գործի հեղինակ համարել է գրչին (հմմտ. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Ե., 1970, էջ 170), բայց մենք վստահ չենք, որ 1711 թ. գրված «Գովասանք»-ի հեղինակը 1733 թ. գրիչն է)

Եպիսկոպոս յոյժ անպիտան
յետոյ շինել զայս գաւազան,
արծաթապատ և զանազան,
որ և չկա իրեան նըման:
Է վարդապետ անուն տիրիս՝
իշխանաւոր գաւազանիս.
ով սուրբ եղբայր, որ վայելիս,
յիշեա զաղօթս քո զեղկելիս:
Գաւազանէս առ քեզ խըրատ,
թէ խելք և միտք ունիս յըստակ,
զի է դորա բոլորն արծաթ,
և ի ներքոյ ունի չոր փայտ:
Նոյնպէս և ես երևիմ մարդ՝
փառօք պայծառ որպէս ըզվարդ,
և ի ներքոյ հոգիս աղքատ
է սևացեալ քան զայրած փայտ:
Դարձեալ ասեմ քեզ այլ խըրատ՝
մի փառասէր լինիր խըպարտ.
լեր դու հովիւ արի և ըզգաստ
և ի գայլոց պահէ զոչխարտ:
Մի ժողովէր ոսկի, արծաթ
և մի անտես առներ զաղքատ,
մի կաշառօք առներ զքո կարգդ,
մի ձեռնադրեր անարժան մարդ:
Մի անպատեհ առներ զայտ բանդ
և մի անկնիր ի բանբասանք.
դու մի առներ զերկիր գանգատ,
որ ոչ ասեն երկիր քեզ վատ:
Յոտս անկանիմ հայրապետին,
յորժամ կարդայ ըստ պատշաճին,
յիշէ զներհեալ գծող չնչին՝
ի ՌՃ **վատտուն (1711)** թըվինս:

(Գրչի հիշատ.) Գրեցի այս Գաւազանագիրքս ի թվականիս մերոյ ՌՃՁԲ (1733) ամին, օգոստոսի ԻԵ (25):

Հրատարակության պատրաստեց՝ ԳԵՎՈՐԳ ՀՈՒՆԱՆՅԱՆ